

«Լումայի» խմբագրութիւնը նոյեմբերի 5-ին ուղղել էր Պ. Բուրգ իւր աշխատակից պ. Սոեփան Գաբրիէլեանին հետեւ և առաջիրը.—

«Լումայի» խմբագրութիւնը խնդրում է Ձեզ լինել ներկայացուցիչ խմբագրութեանս կողմից և մատուցանել տաղանդաւորյօրեւար հոչայաւոր Կարապետ Նզեանին իւր չնորհաւորութիւնները նորա յի նամեայ անխոնջ դարձունէութեան առիթով արքունի ծառայութեան ասպարիջում և բարձր գնահատութեան արժանի Հայ պատմական զբականութեան դիտնական արդիւնաւոր ուսումնասիրութեան վերաբերմամբ. և յատուկ իմ կողմից»:

Յօրեւեանը կատարուել է մեծ շուքով և խուռն բազմութեան ներկայութեամբ՝ «Լումայի» հետևեալ համարում մենք կտանք այդ լուելայն և նշանաւոր հասարակական և գրական գործի ընդարձակ կենսադրութիւնը, պատկերը և յօրեւեանի մանրամասն նկարագրութիւնը, իսկ առ այժմ հաղորդում ենք, որ յօրեւեանի հանդէսն սկսուել է Ազգիս Վեհ. Հայրապետի չնորհաւորական կոնդակի ընթերցումով, որ կարդացել է պ. Ստեփան Մամիկոնեանը, ապա կարդացուել են ուղերձներ Մոսքուայի հայ գաղութից, Պ. Բուրգի Հայ և կեղեցական խորհրդականից, Պ. Բուրգի գաղութի կողմից, ապա խօսել է «Լումայի» ներկայացուցիչը և այլն և այլն:

Հետեւեալ կիրակի ճաշ է տուել պ. Նզեանին Պ. Բուրգի հայ գաղութից, որ տևել է 6½ ժամից մինչև գիշերուայ 1-ը:

Իւր յիսնամեայ ծառայութեան առիթով Ն. Մ. Թագաւոր Կայսը բարեհանել է չնորհել պ. Կ. Նզեանին իսկական գաղտ. Նի խորհրդականի աստիճան:

ՊՐՕՖ. ՄԱՌԻ ՄԻ ՆՈՐ ԶԵՂՈՒՑՈՒՄ.

Անցեալ նոյեմբերի 25-ին, Պ. Բուրգի Արևելեան բաժնում Բարօն Վ. Բոգէնի նախագահութեամբ կայացած նիստում պրօֆ. Ն. Մառը կարդացել է մի զեկուցում Մոնղոլների՝ քրիստոնեաներին անուանող «արկառուն» բառի մասին, որի ծագումը վաղուց զբաղեցրել է արևելագէտներին: Յարգելի պրօֆէսորը յայտնեց, որ ինքը ենթադրում է, թէ այդ բառը հայկական ծագում ունի լուծուածութիւն: Այս ժամանակամիջոցում կատաղի կուի էր մղում երկու կրօնական կուսակցութիւնների մէջ. քաղկեդօնականների և նոցա հակառակորդների: Վերջիններս յաղթող հանդիսացան: Քաղկեդօնականները ստիպուած էին երկրից հեռանալ և գնալ զանազան կողմեր. նոցա մեծ մասը բնակուեցան Վրաստան և ձուլուեցան վրացիների հետ. միւս մասը դիմեց Բուրգարիս և Յունաստան. երրորդ մասը, որոնք առևտուրով էին պարապած, ուղղուեց գէպի Միջին Ասիա

և գաղթականութիւն հաստատեց այնտեղ: Հայքաղկեդօնական-ների աւելի եռանդուն մասը հասան մինչև իսկ Զինաստան: Մօնղոլները ընդհարուելով քրիստոնեայ հայերի հետ՝ նոցա ա-նուանեցին «արկառուն», իսկ այնուհետեւ այս կոչումը տարբածուեց: և մնացեալ քրիստոնեաների վերայ: Զինաստանից մինչև Պարսկաստան, Մոնղոլական տիրապետութեան ամբողջ ընդար-ձակ տարբածութիւնը, ինչպէս երեսում է հին պաշտօնական վա-ւերագրերից, միակ տեղն է, ուր քրիստոնեաները կոչում են «արկառուն»: Որ «արկառուն» բառը հայկական ծագումն ունի, զեկուցողի կարծիքով, այդ մասին վկայում են ինչպէս հայց-հին մատենագիրների վկայութիւնները, նոյնպէս և իւր ուսում-նասիրած ԺԴ դարի՝ քարի վերայ գատած մի արձանագրու-թիւն: (H. B.)

ԹԱՒՐԻՉԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ստացանք Թաւրիդի Հայուհեաց Բարեգործական Միա-ցեալ Ընկերութեան 190^{9/4} ուս. տարեշրջանի տեղեկագիրն ու-հաշուեցայցը տպուած Ատրպատականի թեմական տպարանում: Ընկերութիւնը գտնւում է «Արեգակնախայլ շահնշահի» հովա-նաւորութեան ներքյ և պահում է մի շարք դպրոցական հաս-տատութիւններ Թաւրիզում և գաւառներում:

Տեղեկագրից երեսում է, որ ընկերութեան պահած գաւա-ռական հաստատութիւններն են.

1. Աղաղանի դպրոցը Դարադաղում, 18 երկու սեռի սա-ներով:

2. Բարառուիր և Բարանդուզ գաւառում, 60 եր-կու սեռի սաներով:

3. Բալանիշիր և 17 ա-շակերտներով:

4. Գեարդաբաղի և Որմի գաւառում 74 ա-շակերտներով:

5. Դէբէլէքի և Սովուչքուլաղում 20 ա-շակերտներով: Այս դպրոցը պահում է Ստեփան Տէր Օհանեա-նի տարեկան նպաստով:

6. Դիզաթէքէյի դպրոցը Բարանդուզում—33 երկու սե-ռի սաներով, որոնցից 8 ը ասորի է: Սյս դպրոցը 1899 թուից պահում է Տիգրան Աֆրիկեանի օժանդակութեամբ:

7. Թովլալարի կամ Թաղիաբաղի Արամ Ղաղարեան դըպ-րոցը Միանդուաբում—40 երկու սեռի սաներով:

8. Իքբ-Աղաջի դպրոցը Որմի գաւառում 38 աշակերտով:

9. Նախիջևան—Թէփէի դպրոցը Նազուչայ գաւառում 80

երկու սեռի սաներով:

10. Որմիի դպրոցը համանուն քաղաքում 26 երկու սեռի-